ԹԵՄԱ 3 ԱՄԵՐԻԿԱ

ԴԱՍ 3.5. Լատինական Ամերիկա: Աշխարհագրական դիրքը և սահմանները, կազմը: Բնական պայմաններ և ռեսուրսներ

• • •

Լատինական Ամերիկայի երկրները միավորվում են պատմական ճակատագրով և սոցիալական զարգացման ընդհանրությամբ: Դրանք բոլորը 1810–1825 թթ ազգային ազատագրական պատերազմների արդյունքում անկախություն ձեռք բերած գաղութներն են: Իրենց ձևավորման առաջին փուլում տնտեսապես հետամնաց այս երկրները ֆինանսական կախվածության մեջ ընկան սկզբում՝ **Մեծ Բրիտանիայից** ու **Ֆրանսիայից**, իսկ հետո՝ ԱՄՆ-ից: Տարածաշրջանում է գտնվում աշխարհամասի առաջին և միակ սոցիալիստական երկիրը՝ **Կուբան**: Կա 46 պետություն և տարածք, որոնցից 33-ը ինքնիշխան՝ սուվերեն պետություններ են: Կան ինչպես պետական շինարարության հարուստ ավանդույթներ և զարգացման միջինից բարձր մակարդակ ունեցող պետություններ՝ Բրազիլիա, Արգենտինա, Մեքսիկա, միջին մակարդակ ունեցողներ՝ Վենեսուելա,Կոլումբիա, Չիլի, Պերու, այնպես էլ՝ փոքր, երիտասարդ և հետամնաց պետություններ:

• • •

Լատինական Ամերիկայի արևմուտքում գտնվում է Խաղաղօվկիանոսյան Հրե օղակի մասը կազմող հզոր գեոսինկլինալային գոտին: Գոտում էլ ձևավորվել է Կորդիլիերյան հզոր լեռնային համակարգը, որը Հարավային Ամերիկայում կոչվում է **Անդեր** (իսպաներենից թարգմանած՝ պղնձե լեռներ); Հետևաբար Լատինական Ամերիկայի արևմտյան մասով ձգվում է Հյուսիսային Կորդիլիերների հարավային հատվածը և Անդերը՝ **Ակոնկագուա** բարձր գագաթով ՝ 6960 մ: Ակոնկագուան նաև Ամերիկա աշխարհամասի բարձր գագաթն է: Գործող հրաբուխներից նշանավոր են Կոտոպախին (հասարակածի մոտ), **Պոպոկատեպետլը** և **Օրիսաբան**՝ Մեքսիկական բարձրավանդակում: Խոշոր հարթավայրեր են **Ամազոնի**, **Օրինոկոյի**, **Լա Պլատայի**

դաշտավայրերը, **Բրազիլական**, **Գվիանական**, **Պատագոնիայի** սարահարթերը: Մայրցամաքի ամենացածր կետը **Վալդես** թերակղզու վրա է՝ –40 մ:

• • •

Հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք մեծ ձգվածության, հզոր լեռնային համակարգի առկայության, երկու օվկիանոսների միջև գտնվելու և այլ գործոններով է պայմանավորված կլիմայի բազմազանությունը:

• • •

Հարավային Ամերիկան երկրագնդի ամենախոնավ մայրցամաքն է: Տարածաշրջանի ¼-ը տարեկան ստանում է ավելի քան 2000մմ տեղումներ, մոտ 40%-ը ՝ 1000–2000մմ, մնացածը՝ այնքան, որ բուսաբուծությունն առանց ոռոգման հնարավոր չէ: Տաք ու համեմատաբար խոնավ կլիման տարածաշրջանի մեծ մասում, հիմնականում սավաննաների և նոսր անտառների զոնայում նպաստավոր է շուրջտարյա հողագործության զարգացման համար: Կարևոր հողագործական շրջան է նաև հարավամերիկյան տափաստանը՝ **պամպան**:

• • •

Խոնավ կլիմայի շնորհիվ տարածաշրջանի գետային ցանցը խիտ է և այն բացառիկ հարուստ է ջրաէներգետիկ ռեսուրսներով: Սակայն այդ ռեսուրսները դեռևս արդյունավետ չեն օգտագործվում: Տարածաշրջանում է գտնվում աշխարհի ամենաջրառատ գետը՝ **Ամազոնը** (175000խ.մ.վրկ.), որի ջրահավաք ավազանի մակերեսը 7 մլն. քառ.կմ. է: Այն կազմում է տարածաշրջանի 30%-ը, որի ավելի քան 2/3ը բաժին է ընկնում Բրազիլիային:Ամազոնն ունի նաև տրանսպորտային մեծ նշանակություն: Նույնիսկ ծովային նավերը հասնում են գետաբերանից 3000 կմ հեռավորության վրա գտնվող **Մանաուս** նավահանգիստ: Տարածաշրջանում է ձևավորվում աշխարհի բոլոր գետերի ջրի հոսքի 25%-ը: Տարածքի մոտ 70%-ը զբաղեցնում են Ամազոն, Օրինոկո, Պարանա գետերի ավազանները: Բացի այդ, Լատինական Ամերիկան աշխարհում առաջինն է մեկ շնչին բաժին ընկնող քաղցրահամ ջրի քանակով:

• • •

Բնական պայմանները և ռեսուրսները: Հարավային Ամերիկա մայր-

ցամաքի հիմքում ընկած է Հարավամերիկյան հնագույն պլատֆորմը, որն անջատվել է Գոնդվանա գերմայրցամաքից:

Լատինական Ամերիկայի ընդերքը հարուստ է մետաղական(երկաթաքար- Բրազիլիա ՝ աշխարհում երկրորդը , **Իթաբիրա**, **Կարաժաս**, **Մինաս Ժերաիս** հանքավայրերով, պղինձ, Անդեր, աշխարհի պաշարների 40%-ը) ոչ մետաղական (բորակ, բնական սելիտրա, Չիլի, գրաֆիտ՝ Մեքսիկա, ալմաստ՝ Բոլիվիա, Վենեսուելա) օգտակար հանածոներով: Վառելիքային ռեսուրսներից շատ հարուստ է նավթի և գազի պաշարներով: Նավթի պաշարներով հարուստ են **Մեքսիկան** (9մլրդ տ.) և **Վենեսուելան** (8մլրդ տ.): Օգտակար հանածոների որոշ տեսակներով հարուստ լինելը արտահայտված է նաև մի շարք տեղանուններում. Լա Պլատա, Արգենտինա (արգենտում)- արծաթ, Անդեր, ինկերի լեզվով՝ պզնձե լեռներ, Մինաս Ժերաիս՝ խոշոր հանքեր և այլն: